

ԱՂՕԹՔԻ ԵՒ

ԾՈՍԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Ծոմապահութեամբ մարմինը կը չարչարուի ու կը տկարանայ եւ նոյնիսկ եթէ ուզէ՝ չի կրնար պոռնկիլ: Այսպէս օրինակ, կը պատմուի, թէ վաւաշոտ մարդ մը գեղեցիկ եւ ազնուական կին մը կը սիրէ եւ անոր հաւանութիւնը կը խնդրէ: Կինը կ'ըսէ. «Եթէ հետս անօթի մնաս մինչեւ քեզ կերակուրի կանչելս, ուզածդ թո՛ղ ըլլայ»: Մարդը կը համաձայնի: Կինը երկու օր, հետը նաեւ մարդը՝ ծոմ կը բռնեն: Երրորդ օրը ան կը պատրաստէ սեղանը, ինչպէս նաեւ շքեղ անկողին մը, եւ կանչելով մարդը կ'ըսէ անոր. «Ի՞նչպէս կ'ուզես, անկողի՞ն մտնենք, թէ ճաշենք»: Մարդը կ'աղաղակէ. «Կը հրաժարիմ անկողինէն, որովհետեւ աշխարհի բոլոր կիները կ'ատեն հիմա, բայց կ'ուզեմ ճաշել, որպէսզի սովէն չմեռնիմ»:

Տեսա՞ր, թէ երբ ծոմ չէր բռնած ինչպէս կը նեղուէր ախտէն, իսկ պահեցողութենէն ետք բժշկուեցաւ անկէ: Ուստի, ճիշտ ըսուած է, թէ՛ պոռնկութիւնը ծոմով կը բուժուի, իսկ մտային փորձութիւնները՝ աղօթքով. եւ այսպէս ծոմով եւ աղօթքով մեղքերու թողութիւն կը ստանանք Աստուծմէ, որովհետեւ մեծ գորութիւն ունի աղօթքը, մանաւանդ գիշերային աղօթքը: Ինչպէս, որ Պօղոսն ու Շիղան գիշերը աղօթելով շղթաները քակեցին եւ բանտին դռները բացին (Գործք. 16.25-27), նոյնը ընենք եւ մենք բանանք ո՛չ թէ բանաղ, այլ երկինքը:

ՅՈՐԴՈՐԱԿՆԵՐ Բարսեղ



**Ինչո՞ւ համար մեր եկեղեցիներուն խորանները արեւելեան կողմը շինուած են եւ հաւատացեալներ աղօթելու ատեն արեւելք կը դառնան:**

Արեւելքը խորհրդանշէ է Աստուծոյ գահու լուսեղէն յարկին, որուն համար սաղմոսերգուն կ'ըսէ. «Ճանապարհ ըրէք անոր, որ երկինքէ երկինք արեւելքի կողմը կը նստի»: Արդարութեան արեգակը՝ Քրիստոս ծագեցաւ արեւելքէն եւ իջաւ երկիր լուսաւորելու համար մեղքի խաւարով պատած աշխարհը: Արեւելքը փոխաբերաբար հոմանիշ դարձած է երկինքին՝ Աստուծոյ գահուն: Այս իմաստով Յիսուս իր երկրորդ գալուստն ալ նմանցուցած է արեւելքէն ելլող ու մինչեւ արեւմուտք երեւող փայլակին: Ուստի աղօթելու ատեն արեւելք դառնալը նշան է Արդարութեան Արեգակին՝ Յիսուս Քրիստոսի դէմ յանդիման կենալու, անոր լոյսը ըմբռնելու եւ սպասելու անոր երկրորդ գալուստին:

**ՀԱՍՅԷ.**



ՃՐԱԳ ԵՒ ՆՏԵՐՈՒՄ ՃՐԱԳ Է ՈՒ ԻՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ

(Մղ.119.105)

ԺԳ. ՏԱՐԻ **ԿԻՐԱԿԻ, 24 ՅՈՒՆՈՒԱՐ 2021** ԹԻԻ

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**  
Ես. 61.10-62.9 Բ. Տիմ. 2.15-26  
**ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 6.15-21**

Յիսուս երբ գիտցաւ, թէ պիտի գան զինք բռնութեամբ թագաւոր ընելու, դարձեալ լեռը ելաւ, առանձինն:

Երեկոյեան, Յիսուսի աշակերտները լիճին եզերքը իջան եւ նաւակ մտնելով՝ սկսան երթալ լիճին դիմացի կողմը, դէպի Կափառնաւում: Երբ մթնցաւ, տակաւին Յիսուս իրենց չէր եկած: Լիճը գորաւոր հովէն կ'ալեկոծէր:

Աշակերտները հազիւ հինգ կամ վեց քիլոմէթր նաւարկած էին, երբ տեսան Յիսուսը, որ լիճին վրայէն քալելով կը մօտենար նաւակին: Բոլորը սարսափեցան: Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ, մի՛ վախնաք»:

Անոնք կ'ուզէին զինք նաւակին մէջ առնել, բայց արդէն նաւակը հասաւ այն

**ՊՕՂՈՍ ԱՌԱՋԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՏԻՄՈՂԷՈՍԻ ԳՐՈՒԱԾ Բ. ՆԱՍԱԿԷՆ 2.22-26**  
Երիտասարդական ցանկութիւններէն փախիր եւ արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան ու սրբութեան հետամուտ եղիր, անոնց պէս՝ որոնք մաքուր սրտով կ'աղօթեն Աստուծոյ: Յիմար եւ անօգուտ վէճերէ հրաժարէ՛ գիտնալով, որ անոնցմէ կռիւներ կը ծագին: Աստուծոյ ծառան պէտք չէ կռուի, այլ պէտք է հեզ ըլլայ բոլորին հանդէպ, կարող ըլլայ Աւետարանը սորվեցնելու, ներողամիտ ըլլայ՝ որպէսզի քաղցրութեամբ խրատէ հակառակողները, որովհետեւ Աստուած միշտ ալ առիթ կու տայ, որ անոնք դառնան իրենց սխալէն եւ ճշմարտութիւնը ճանչնան եւ զգաստանալով դուրս գան Սատանային որոգայթներէն, որոնց մէջ բռնուած՝ անոր կամքը կը կատարեն:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐ

Ս. Սարգիս Զօրավար Կապա-  
ղովկիոյ Գամիրք գաւառէն էր: Քաջ եւ  
առաքինի զինուորական մը, որ զօրա-  
պետի աստիճանին հասաւ: Համար-  
ձակութեամբ կը քարոզէր Աւետարանը  
եւ կը կործանէր բազմաւորները:

Երբ Յուլիանոս կայսրը, որ քրիս-  
տոնէութիւնը ուրացած էր, գահ բարձ-  
րացաւ, Սարգիս իր Մարտիրոս որդիին  
հետ Հայաստան ապաստանեցաւ,  
Տիրան թագաւորի մօտ եւ ժամանակ մը  
հոն մնալէ ետք անցաւ Պարսկաստան,  
Պարսից Շապուհ թագաւորին մօտ՝  
ծառայելով զինուորական ասպարէզին  
մէջ:

Մեծ եղաւ իր որդիին՝ Մարտիրոսին  
ազդեցութիւնը իր հսկողութեան ներքեւ  
գտնուող պարսիկ զօրքին վրայ: Անոնց  
մէջէն քրիստոնէութեան դարձողներ  
եղան:

Այս պարագան հետզհետէ ուշագ-  
րաւ դառնալով, Սարգիս եւ իր զաւակը  
արքայական հրաւեր ստացան զոհ մա-  
տուցանելու արքունի մեհեանին մէջ:

Սակայն Սուրբ Սարգիս նոյնիսկ  
քաջութիւնը ունեցաւ անարգելու կուռ-  
քերը: Առ ի հետեւանք իրենց յանդուգն  
կեցուածքին՝ զօրավարն ու իր որդին  
մահուան դատապարտուեցան: Իր  
պարսիկ զինուորներէն տասնչորս ան-  
ձեր, որոնք մինչեւ վերջ հաւատարիմ  
մնացեր էին, առին Սարգիսի մարմինը  
եւ մաքուր զգեստներով պատեցին:  
Բայց թագաւորին հրամանով իրենք եւս  
զխաստուեցան ու իրենց նահատակու-  
թիւնը եւս կը յիշատակուի ամէն տարի  
Սուրբ Սարգիսի եւ անոր Մարտիրոս  
զաւակին յիշատակին հետ:

## ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏՄԱՆԱՆ ԲԱԺԻՆ

### Մեր Տէրը Յիսուս Քրիստոս ի՞նչ ըսաւ Ծոմապահութեան մասին:

Յիսուս Քրիստոս իր քառասնօրեայ  
ծոմապահութեամբ ցոյց տուաւ՝ թէ  
պահեցողութիւնը անհրաժեշտ է հո-  
գեւորապէս զօրանալու եւ սատանայի  
որոգայթներուն դէմ դնելու համար: Իսկ  
լերան Քարոզի ընթացքին պատուիրեց  
ըսելով. «Երբ ծոմ պահէք, կեղծա-  
ւորներու պէս տրտմած մի՛ ըլլաք, որոնք  
կ'արեն իրենց երեսը, որպէսզի մարդոց  
ցոյց տան, թէ ծոմ կը պահեն: Ծճմարիտ  
կ'ըսեն ձեզի, այն է անոնց վարձքը:  
Սակայն դուն երբ ծոմ պահես, օձէ՛  
գլուխդ եւ լուս' երեսդ, որպէսզի մարդոց  
պահեցողի պէս չերեւիս, այլ՝ Հօրդ  
ծածկապէս. եւ Հայրդ, որ կը տեսնէ  
ծածուկը՝ պիտի հատուցանէ քեզի»:  
(Մատթ. 2. 16-18)

Առաքեալներն ալ ծոմ կը պահէին:  
«Գործք Առաքելոց» գիրքէն եւ առա-  
քելական թուղթերէն կ'իմանանք, թէ  
անոնք յաճախ ծոմապահութեամբ կ'ա-  
ղօթէին, իրենց մարմինը կ'ընկճէին ու  
հսկումներ կը կատարէին հոգեւորապէս  
զօրանալու եւ Սուրբ Հոգւոյն շնորհ-  
ներուն արժանանալու համար:

Պօղոս Առաքեալ իր թուղթերուն մէջ  
կը յիշէ՝ թէ ինք ծոմապահութիւն եւ  
հսկում կը կատարէ:

**Բարի պահեցողութիւն եւ ծոմա-  
պահութիւն բոլոր այն հաւատացեալնե-  
րուն որոնք առաջատրաց պահեցո-  
ղութիւնը ունեցան:**

## ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՄ

### Դրամի սիրոյն մի՛ ծածկեր ճշմարտութիւնը

Յիսուսի յարութենէն ետք անոր  
գերեզմանին պահապաններէն  
ոմանք Երուսաղէմ գացին «եւ ինչ որ  
պատահած էր պատմեցին աւագ քա-  
հանաներուն»: Աւագ քահանաներն ու  
երեցները խորհրդակցելէ ետք, դրամ  
տուին պահապաններուն եւ պատուի-  
րեցին անոնց ըսել թէ «աշակերտները  
գիշերով եկան եւ գողցան մարմինը»  
երբ իրենք քնացած էին (Մտ. 28.11-  
13): Սիրելիներ, մենք ալ երբեմն կա-  
շառք չե՞նք ստանար որպէսզի  
ստենք: Կաշառքը միայն դրամը չէ.  
մէկը կրնայ կաշառուիլ խոստումով  
մը, աթոռով, փառքով, եւայլն: Որքա՛ն  
մարդիկ կան որոնք շահելու համար  
բան մը կամ սիրաշահելու համար  
անձ մը, կը ստեն ու ճշմարտութիւնը  
կը խեղաթիւրեն: Մենք չըլլանք  
ատոնցմէ:

### ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉՈՐ

«Ով որ իսկապէս ճանչցած է  
Սուրբ Գիրքի գիտութիւնը գիտէ, որ  
Գիրքի ամենապարզ ու ամենաի-  
մաստուն խօսքի զօրութիւնը կը հե-  
տապնդէ միեւնոյն նպատակը՝ մար-  
դու փրկութիւնը, իսկ այս գիտութեան  
անհաղորդ մարդը յաճախ կը գայ-  
թակդի» (Պետրոս Դամասկացի):

## ԵԹԷ ԿԱՄ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

Երբ գիշերը հանգիստ քուն կը  
փնտռես, քնանալէ առաջ կարդա՛

Քեզ կը կանչեն, պատասխան  
տուր, ո՛վ Աստուած, դո՛ն ես արդա-  
րութիւնս պաշտպանողը, նեղու-  
թեանս մէջ դո՛ն զիս հանգստա-  
ցուցիր: Ողորմէ՛ ինձի, լսէ՛ աղօթքս:

Ո՛վ մարդիկ, մինչեւ ե՞րբ զիս  
պիտի անարգէք. ինչո՞ւ դատար-  
կութիւնը կը սիրէք եւ ստութեամբ կը  
զբաղիք: Գիտցէք, թէ ՏԷՐԸ բացա-  
ռիկ վերաբերում ցոյց տուաւ ինձի,  
որ հաւատարիմ եղայ իրեն, եւ պիտի  
լսէ զիս, երբ օգնութեան կանչեմ  
զինք: Աստուծմէ՛ վախցէք եւ մի՛  
մեղանչէք, երբ անկողին կը մտնէք՝  
այս մասին մտածեցէ՛ք, եւ լռեցէ՛ք:  
Ձեր մեղքերէն արդարանալու  
համար՝ զոհեր մատուցանեցէք, եւ  
ՏԻՐՈՋ վստահեցէք:

Շատեր կ'ըսեն. «Ո՛հ, բարիք-  
ներովդ մեզ լիացուր, ՏԷՐ շնորհք-  
ներդ առատացո՛ւր մեր վրայ:

Բայց դուն սրտիս շատ ատելի ու-  
րախութիւն պարգեւեցիր, քան ա-  
նոնք կրնան գտնել՝ ցորենի, գինիի  
եւ ձեթի առատութեան մէջ:  
Խաղաղութեամբ կը պառկիմ ու կը  
քնանամ, որովհետեւ, ՏԷՐ, միայն  
դո՛ն ապահովութիւն կուտաս ինձի: